

ՄԻ ԳՐՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հայ գրքարվեստի պատմության մեջ կան բազմաթիվ դրվագներ, որոնք առ այսօր ուսումնասիրման կարիք ունեն: Կատարվող հետազոտական աշխատանքները և, հատկապես, 21-րդ դարի տեղեկատվական նոր տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս գտնելու պատմության հարցականները, ինչպես նաև ամբողջացնել հայ գրքի պատմությունը, ինչին ձեռնամուխ է եղել Հայաստանի ազգային գրադարանը: Այստեղ պահպանվող հավաքածուները, պարբերաբար ստուգվում են, ինչի արդյունքում համայրվում են ֆոնդերը:

Հայաստանի ազգային գրադարանի հավաքածուներում կան բազմաթիվ գրքեր, որոնք կազմակից /ալիգատային/ են: Սա պատճառ է հանդիսացել, որպեսզի որոշ գրքեր դուրս մնան գրացուցակներից: Նմանատիպ գրքերից է Լազարյան ձեռնարանի հավաքածուի 2337 գույքահամարով գրանցված Brosset, M. F. Monographie des mornaies armeniennes. SPB, 1839 գիրքը:

2015թ. կատարված հերթական ստուգումը ցույց տվեց, որ այս գրքին կազմակից են այլ գրքեր, որոնք տասնամյակների ընթացքում չեն գրանցվել և գույքահամար չեն ստացել: Նույն կազմի մեջ ներառված են 5 միավոր այլալեզու, 1 միավոր ռուսերեն և 1 միավոր հայերեն գրքեր: Առանձնացնենք կազմի մեջ ներառված հայերեն գիրքը՝ «Յայտարարութիւն Արամեան ընկերութեան վասն գիրս ուսմանց տարածանելոյ» (Վիեննա, 1843)<sup>1</sup>:

Հայկ Դավթյանն իր «Հայ գիրքը 1801-1850 թվականներին» աշխատության մեջ գիրքը նկարագրել է աստղանիշով, 1213 համարի ներքո՝ «1213\*. Արամեան Ընկերութեան՝ Ուսման գրքեր տարածելու յայտարարութիւնը: Վիեննա, տպ. «Պաշտպան ս. Աստուածածնի վանքը» (Մխիթարյան), 1843, յունուար ամսու մէջ»: Աստղանիշով նշված լինելը նշանակում է, որ մատենագրողը գիրքը չի տեսել, այլ նկարագրել է Արսեն Ղազիկյանի մատենագիտության տվյալների հիման վրա, քանի որ իր կատարված նկարագրության

<sup>1</sup>Արսեն Ղազիկյանի «Հայկական նոր մատենագիտութիւն եւ հանրագիտարան հայ կեանքի», Վենետիկ, 1909-1912 աշխատության մեջ գրքի նկարագրությունը հետևյալն է՝ «ԱՐՄԱԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ՝ Ուսման գրքեր տարածելու Յայտարարութիւնը: Վիեննա, Պաշտպան. Ս. Աստուածածնայ վանքը. 1843, Յունվար ամսու մէջ:

վերջում նշված է. «Ղազիկյանը ծանոթագրել է. «Նոյնը արտատպուած Արշալոյս Արարատեանի մէջ , 1843, թիւ 131, Ղ. 1. 228»<sup>2</sup>:



4 էջից բաղկացած գրքուկը ներակայացնում է «Արամեան» ընկերության կոչ-հայտարարությունը՝ ավելի շատ ուշադրություն դարձնել կրթության հարցերին, կարևորել հայերեն դասագրքերի տպագրությունը, միավորվել և հանդես գալ բարեգործությամբ: Գրքուկը ներառված է նաև «Հայ գիրք» էլեկտրոնային շտեմարան՝ համապատասխան գրառմամբ, ընթեռնելի է [http://greenstone.flib.sci.am/gsd/collect/armbook/books/aram\\_index.html](http://greenstone.flib.sci.am/gsd/collect/armbook/books/aram_index.html) հղումով:

Այսպիսով, Հայաստանի ազգային գրադարանի հայ գրքի հավաքածուում ևս մեկ գիրք ավելացավ, որը մինչ այսօր համարվում էր բացակա:

Նմանատիպ աշխատանքները շարունակվում են և առաջիկայում կներկայացնենք այլ գրքեր, որոնք նախկինում դուրս են մնացել գրացուցակներից:

ALISA ADAMYAN  
HISTORY OF BOOKS  
SUMMARY

New findings from the National Library of Armenia collections are introduced.

<sup>2</sup> Ղ. 1. 228 նշանակում է Ղազիկյան, հատոր առաջին, էջ 228: